ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-16/3» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 14.06. 2019թ.
Ժամը 11^{30}

Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱՎ պետ գնդապետ Հ. Կարապետյան (ԳԱՊ),
անդամներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱՎ գլխավոր մասնագետ Տ. Գասպարյան,
ՀՀ ՋՈՒ ԳՇ Ս և Զ բաժնի ավագ սպա փախգնդապետ Ն.Սահակյան,
ՀՀ ՋՈՒ ԳՇ Ս և Զ բաժնի գործավարության պետ-ԷՀՄ օպերատոր ենթասպա Մ. Մանուչարյան,
Գնումների համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ Գ. Հակոբյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-16/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

(Գ. Հակոբյան)

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Գ. Հակոբյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-16/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին «ՊԻՊԱՍ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի, ԱՁ Վոլոդյա Նիկողոսյանի, «ՆՈՎԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի, «ՆԻԿՕ-ՏԵԿ» ՍՊԸ-ի,«ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը և տեխնիկական բնութագրերը առկա են: Գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են ներկայացված որոկավորման փաստաթղթերը և պարզվել է, որ դրանցում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

- «ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ -ի ներկայացրած տեխնիկական բնութագրում՝ Հավելված 6.1-ում նշված <կամ համարժեք>-ը պետք է լինի ստույգ տեսականի, սխալանքը ± 10^{-7} փոխարեն նշված է սխալանքը ± 10-7:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկում է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունը:

Մինչև սահմանված ժամկետի ավարտը «ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն շտկել է վերոնշված անհամապատասխանությունը:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն պահանջներին, ԱՁ Վոլոդյա Նիկողոսյանը,

«ՆՈՎԱ ԹՐԵՅԴ», «ՆԻԿՕ-ՏԵԿ», «ՌԵՖՈՐՄ ԳՐՈՒՊ» և «ՊԻՊԱՍ ՖՈՒԴ» ՍՊԸ-ները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն:

1.2 Հիմք ընդունելով գնահատման թերթիկները՝ 16.06.2019թ. հանձնաժողովը որոշեց ընթացակարգի 1-ին չափաբաժնում «ՊԻՊԱՍ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի, 3-4-րդ, 7-8-րդ չափաբաժիններում՝ ԱՁ Վոլոդյա Նիկողոսյանի, 10-րդ չափաբաժնում՝ «ՌԵՖՈՐՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի, 11-12-րդ չափաբաժիններում՝ «ՆՈՎԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի, 13-րդ, 15-16-րդ չափաբաժիններում՝ «ՆԻԿՕ-ՏԵԿ» ՍՊԸ–ի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-16/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակից:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-16/3»** ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Գ. Հակոբյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-16/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրերի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Հ. Կարապետյան

Գնահատող, Տ. Գասպարյան

Գնահատող, Ն.Սահակյան,

Գնահատող, Մ. Մանուչարյան

Գնումների համակարգող՝ Գ. Հակոբյան